

Ն. Ս. Օ. Տ. Տ. ՊԱՐԵԳԻՆ Բ.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՒՂԵՐՁՆ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 դեկտեմբերի, 2020 թ.)

Սիրելի՛ զաւակներ Մեր ի Հայաստան, Արցախ եւ ի սփիւռս,
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրական սիրոյ Մեր ողջոյնը, աղօթքն
ու օրհնութիւնն ենք բերում ձեզ տարեմուտի այս երեկոյ:

Հնի եւ նորի սահմանագծին, երբ մեր հայեացքն ուղղոււմ է դէպի
ապագայ, ծանր հոգով նաեւ վերյիշում ենք չարաղէտ 2020 թուականը
եւ սգում մեր հազարաւոր զաւակների եւ Արցախ աշխարհի զգալի մա-
սի կորուստը: Անցնող տարում համավարակի եւ պատերազմի արհա-
ւիրքները կորստեան ցաւ ու մահուան վիշտ տարածեցին հայրենական
մեր կեանքում:

Մեր հոգիները ալեկոծեցին նաեւ Սիրիայում չընդհատուող պատե-
րազմի ծանր հետեւանքները եւ աղէտալի դէպքերը Լիբանանում: Հայաս-
տան եւ Արցախ մեր երկրի առջեւ ծառացած քաղաքական, տնտեսական
եւ սոցիալական մարտահրաւէրները, հայրենիքի սահմաններին անկա-
յուն խաղաղութիւնը, ապագայի անորոշութիւնը, արդարեւ, տկարացրել
են մեր ժողովրդի զաւակների լաւատեսութեան ոգին: Յուսախաբ ենք,
այո՛, բայց Աստծուն ապաւինած՝ լի ենք հաւատով, որ պիտի յաղթահա-
րենք դժուարին այս ճգնաժամը:

«Դու չես լքի նրանց, ովքեր փնտրում են Քեզ, Տէր» (Սաղմ. Թ. 11):
Սաղմոսերգուի այս խօսքերը հոգում ծրարած՝ մեր ժողովուրդը բոլոր ժա-
մանակներում իր յուսավառ հայեացքն ուղղել է դէպի գալիքը: Հայոց ան-
կախ պետականութեան նուիրական տեսիլքն ու անհատնում ձգտումն
իր սրտում ազգս հայոց զօրութիւնն է ունեցել յառնելու ամենածանր

փորձութիւններից, անգամ հայրենազրկումի եւ ցեղասպանութեան արհաւիրքներից, եւ այսօր էլ, հաւատում ենք, ներուժն ունի վերակազմակերպելու իր կեանքը, զօրացնելու հայրենի պետութիւնը: Հայրենաշինութեան սրբազան առաքելութիւնը յաջողութեամբ պիտի պսակուի միայն մեր ժողովրդի կարող ու առողջ բոլոր ուժերի համերաշխ մասնակցութեամբ եւ միաբան ոգով: «Միաբանութիւնը,— ինչպէս գրում է Մեծն Եղիշէ վարդապետը,— բարի գործերի մայրն է, անմիաբանութիւնը՝ չար գործերի ծնողը»:

Սիրելիներ,

Հայրապետիս յորդորն ու պատգամն է՝ ստեղծուած լրջագոյն իրադրութեան առջեւ զօրանալ հաւատով եւ ամրապնդել վճռականութիւնը, որպէսզի ամենայն յանձնառութեամբ կառուցենք եւ սերունդներին աւանդենք հզօր, բարօր եւ անվտանգ հայրենիք: Աստծոյ Խօսքին ու քրիստոնէական արժէքներին հաւատարիմ՝ հոգ տանենք միմեանց եւ ջերմագին սիրով առ բազմաշարժար մեր հայրենիքը, մեր ջանքերն ու ուժերը մէկտեղենք ի նպաստ ազգային ու հայրենական մեր կեանքի նորոգութեան ու պայծառութեան:

Մեր հայրենիքը հզօրացնելու, մեր պետականութիւնը վտանգներից զերծ պահելու, մեր սահմանները խաղաղ ու ապահով դարձնելու եւ համայն մեր ժողովրդի կեանքը շէնացնելու պատասխանատուութիւնն ամէնքինս է: Այս գիտակցութեամբ հայրենիքի նոր օրը խարսխենք եղբայրսիրութեան, արդարութեան եւ օրինայարգութեան վրայ:

Նոր տարուայ սեմին միասնաբար հայցենք, որ Տիրոջ Սուրբ Ծննդեան շնորհները «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» աւետիսով տարածուեն մեր հայրենի եզերքներում: Աղօթենք ու երախտագէտ սրտով յիշենք մեր նահատակներին, շուտափոյթ վերադարձ մաղթենք գերեվարուածներին, ապաքինութիւն՝ վիրաւոր մեր զաւակներին եւ խնդրենք Աստծոյ զօրակցութիւնն ու օրհնութիւնը նրանց, մեր հերոսների ընտանիքներին եւ համայն մեր ժողովրդին: Աղօթենք հայրենեաց պաշտպանութեան դիրքերում գտնուող մեր բանակի քաջարի զօրականների եւ բոլոր նրանց համար, ովքեր տարեմուտը դիմաւորում են ծառայութեան մէջ: Աղօթքով յիշենք եւ համավարակից մահացած մեր ժողովրդի զաւակներին:

Ամենագույթ Աստուած, բարերար Քո կամքով եւ ամենառատ ողորմութեամբ թող 2021 թուականը լինի խաղաղութեան, ազգաշէն ու հայրենանպաստ իրադործումների տարի եւ միախառնութիւն բերի մեր սրտերին, զօրութիւն եւ յաղթութիւն՝ հայոց կեանքին:

Աստուած պահապան մեր հայրենիքին եւ ժողովրդին:

Բարի, օրհնեալ տարի:

